ամենայնի»։ Մովսէս մարգարէն Օրինաց Գրքի մէջ գրէ. «Մի հայհոյեսցես զիշխան ժողովրդեան քո», և թէ՝ «Պատուեա զհայր քո և զմայր» իսկ Պօղոս Առաքեալն ասէ. «Հնազանդ լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն հոգւոց ձերոց»։ Եթէ Սուրբ Գրքի մէջ որոնենք այս մասին վկայութիւններ՝ հարիւրաւորը կարող ենք գտնել յօգուտ մեծերին, այն է հարց, առաջնորդաց, են, են։

Բայց թէ սրբան վկայութիւնք կը գտնուին յօգուտ փոքրներին, այն է՝ որդւոց, ստորադրելոց են, այն կը թողում ուրոնոզաց կամացը. միայն Պօղոս Առաքելոյ մի վկայութիւնը կամիմ յիշեցնել հարց և մեծաւորաց, որ ասէ. «Հաբք (հոգեւոր և մարմնաւոր) մի զայրացուցանէք զորդիս ձեր»։

Այս մասին հարկ չհամարեցի մանրամասնաբար նկարագրել այն բարոյական ցաւերն, որ ի զուր երկուստէք կրում են թէ՝ մեծաւորներն և թէ՝ փոքրաւորներն. ըստ որում երկարապատում գրել եմ շատ գրողներից առած՝ այն գրքիս մէջ, որ կրում է անունը «Էջմիածին և Ընջաղայք իւր», որից երեւում է, որ մեծերը հաւասարակշռութիւն չեն պահել կառավարութեան մէջ՝ ինչպէս ամենայն պատմագիրք աւանդեն։ Իսկ ես 1850 թուէն անձամբ մերձաւորապէս ծանօթ լինելով հինգ կաթուղիկոսաց՝ ց1896 ամն, հաւաստեաւ գիտեմ և վկայեմ։

Իբրեւ համառօտ հաշիւ մեր եօթնամեայ առաջնորդական գործողութեանց Ջամախւոյ թեմում (1887 յունիս 1894 յուլիս) գրեմ հետեւեալն ի գիտութիւն ընթերցողաց։

Ա. Ընել, պատրաստել եմ ըստ կարողութեանս նախ՝ կենդանի տաճարներն, ինձ յանձնած ժողովրդեան սրտերն՝ Աւետարանական քարոզութեամբ և հոգեւոր և բարոյական խնամատարութեամբ, ըստ Պօղոսի Առաքելոյն՝ սատելով, յանդիմանելով և մխիթարելով՝ պահպանել եմ բանաւոր հօտը «ի վայ-